ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» նոյեմբերի 2018 թվականի N 455-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սահակ Սուրենի Սարգսյանի (ծնված՝ 1965 թվականի մարտի 31-ին) և Հայկուհի Թորոսի Կուզուցյանի (ծնված՝ 1967 թվականի փետրվարի 5-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի N 1706301 վկայական, տրված 2003 թվականի հոկտեմբերի 15-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 5-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սահակ Սուրենի Սարգսյանը և Հայկուհի Թորոսի Կուզուցյանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում 2015 թվականին ինքնակամ կառուցել են բնակելի տուն՝ 131,60 քառ.մետր, նկուղ՝ 42,09 քառ.մետր, ավտոտնակ՝ 21,60 քառ.մետր, հավաբուն՝ 10,10 քառ.մետր, զուգարան՝ 3,33 քառ.մետր և պարիսպ՝ 14,86 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սահակ Սուրենի Սարգսյանին և Հայկուհի Թորոսի Կուզուցյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Սահակ Սուրենի Սարգսյանին և Հայկուհի Թորոսի Կուզուցյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 529 423 (հինգ հարյուր քսանինը հազար չորս հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Միրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 13
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» նոյեմբերի 2018 թվականի N 456-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 324-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 324-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 4-րդ կետում «34-րդ փողոց, թիվ 12/1» բառերը փոխարինել «34-րդ փողոց, թիվ 12/2» բառերով:

2) որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 13
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» նոյեմբերի 2018 թվականի N 457-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Կարեն Հրայրի Հայրապետյանի (ծնված՝ 1973 թվականին հունվարի 13-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 60 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22052017-07-0006 վկայական, անհատ ձեռնարկատեր Կարեն Մարտիրոսյանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 29-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Կարեն Մարտիրոսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Կարեն Հրայրի Հայրապետյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 60 հասցեի տնամերձ հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցել է բնակելի տուն՝ 719,4 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Կարեն Հրայրի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 60 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Կարեն Հրայրի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 60 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 870 440 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ          Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 13
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» նոյեմբերի 2018 թվականի N 458-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արման Արթուրի Գյուլումյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 3/1 հասցեում զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Արման Արթուրի Գյուլումյանին, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 13
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» նոյեմբերի 2018 թվականի N 459-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի, Ջրվեժ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի, այսուհետ՝ ՏԱՊ և համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի, 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի, այսուհետ՝ ՏԱՊ և համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Ջրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:
4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Ջրվեժ համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 13
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
նոյեմբերի 13-ի N 459-Ա որոշման

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2018 թվականի նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքնային պլանի և համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարկված Ջրվեժ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի և համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կարող են մինչև 2018 թվականի նոյեմբերի 28-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում (www.jrvezh.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան՝

1. Ջրվեժ համայնքի Ձովք բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը 16:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ձովք, Գլխավոր խճուղի, թիվ 16:
2. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 16:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 21:
3. Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-644-929 հեռախոսահամարով:

Ջրվեժի համայնքապետարան

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
նոյեմբերի 13-ի N 459-Ա որոշման

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2018 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարկված Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում (www.jrvezh.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան՝

4. Ջրվեժ համայնքի Ձովք բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 16:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ձովք, Գլխավոր խճուղի, թիվ 16:

5. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 16:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 21:

6. Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրում՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-644929 հեռախոսահամարով:

Ջրվեժի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«14» նոյեմբերի 2018 թվականի N 460-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արմինե Յուրիկի Գևորգյանին տալ 30,0 քառ.մետր մակերեսով տնտեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-078 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում:

2.Պարտավորեցնել Արմինե Յուրիկի Գևորգյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2018 թվականի N 461-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վարդուհի Ռաֆիկի Ավագյանին տալ արտադրամասի կառուցման և հողամասի պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 9/1 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Վարդուհի Ռաֆիկի Ավագյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«15» նոյեմբերի 2018 թվականի N 462-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին Ջրվեժ համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 79, 6-րդ փողոցի թիվ 39 և 20-րդ փողոցի թիվ 1 հասցեին հարող հատվածներում,

2) Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 20 հասցեին հարող հատվածում,

3) Ձովք գյուղի Գլխավոր խճուղի թիվ 16/1 հասցեին հարող հատվածում:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի օգնական Նորայր Սանթրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 15
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» նոյեմբերի 2018 թվականի N 463-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարետա Հովհաննեսի Սմբաթյանի (ծնված՝ 1940 թվականին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) N 2522826 վկայական, տրված 2008 թվականի դեկտեմբերի 26-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի նոյեմբերի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարետա Հովհաննեսի Սմբաթյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցել է պարիսպ՝ 12,12 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարետա Հովհաննեսի Սմբաթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Մարետա Հովհաննեսի Սմբաթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 9/1 տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 18 908 (տասնութ հազար ինը հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վաhե Միրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 16
գ. Ջրվեժ